ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/213

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2018թ. թիվ 27/26-3/24037-18 գրությամբ Ա/Ձ Հրայր Մանուկյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.12.2018թ. թիվ ԴՎԱ/5031 գրության հիման վրա, 24.12.2018թ. թիվ 27/26-3/24037-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Հրայր Մանուկյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Հրայր Մանուկյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Հրայր Մանուկյանի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/213 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.12.2018թ. թիվ ԴՎԱ/5031 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Ա/Ձ Հրայր Մանուկյանի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 20.07.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/22-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1. կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.11.2018թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Նույն գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է, որ Պայմանագրի մասնակի լուծման վերաբերյալ գրությունը 12.12.2018թ. ուղարկվել է Մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/213 ընթացակարգի շրջանակներում 27.12.2018թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հրայր Մանուկյանի միջև 20.07.2018թ. կնքվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման «ԳՀԱՊՁԲ-7/22-2» ծածկագրով պայմանագիր, որի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ա/Ձ Հրայր Մանուկյանը պարտավորվել է 2018թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին մատակարարել ընդհանուր 30 034 կգ լոլիկ:

2. Մասնակցին ուղղված 12.12.2018թ. թիվ ԴՎԱ/4975 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջը՝ 15.11.2018թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 23-րդ, 24-րդ և 25-րդ չափաբաժինների մասով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2018թ. թիվ 27/26-3/24037-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.12.2018թ. թիվ ԴՎԱ/5031 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հրայր Մանուկյանի միջև 20.07.2018թ. կնքվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի գնման «ԳՀԱՊՁԲ-7/22-2» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողը (տվյալ դեպքում՝ Ա/Ձ Հրայր Մանուկյան) պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 23-25-րդ չափաբաժինների համաձայն՝ Ա/Ձ Հրայր Մանուկյանը պարտավորվել է 2018թ. հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում մատակարարել ընդհանուր 30 034 կգ լոլիկ:

Գործում առկա 03.09.2018թ. թիվ 020929, 04.10.2018թ. թիվ 013963 հատուկ հարկային հաշիվների, ինչպես նաև ՀՀ պատշտպանության նախարարության պատասխանատու ստորաբաժանման համապատասխան գրության համաձայն՝ Ա/Ձ Հրայր Մանուկյանի կողմից 15.11.2018թ. դրությամբ Պայմանագրի շրջանակներում մատակարարվել է ընդամենը 4120 կգ լոլիկ:

Մասնակցին ուղղված 12.12.2018թ. թիվ ԴՎԱ/4975 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հրայր Մանուկյանի միջև 20.07.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/22-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Մասնակցի կողմից պետք է մատակարարվեր ընդհանուր 30 034 կգ «լոլիկ» ապրանքատեսակը, որը պետք է մատակարարվեր մինչև 30.09.2018թ., սակայն մինչև նշված օրը մատակարարվել է ընդամենը 4120 կգ:

Նույն գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջը՝ 15.11.2018թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 23-րդ, 24-րդ և 25-րդ չափաբաժինների մասով:

Այսպիսով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետով և նույն կետի 2.1.7.1 ենթակետով սահմանվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի 1-22-րդ չափաբաժինների համար, և 40 օրից ավելի 22-34-րդ չափաբաժինների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Հրայր Մանուկյանը վերջինիս և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 20.07.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/22-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում թույլ է տվել պայմանագրի էական խախտում, քանի որ Մասնակիցը պարտավորվելով մինչև 30.09.2018թ. մատակարարել ընդհանուր 30 034 կգ «լոլիկ» ապրանքատեսակը, 15.11.2018թ. դրությամբ մատակարարել է 4120 կգ ապրանք, որի հետևանքով ապրանքի մնացած քանակի մասով մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի, որն իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Գտնում եմ, որ Ա/Ձ Հրայր Մանուկյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2018թ. թիվ 27/26-3/24037-18 գրությամբ Ա/Ձ Հրայր Մանուկյանին (ՀՎՀՀ՝ 92103429) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Հրայր Մանուկյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ